կոս Բ. Վ. Եղիազարովը, պատմական գիտությունների դոկտոր, Հնագիտության և ազգագրության ինստիտուտի դիրեկտոր Բ. Ն. Առաքելյանը, Կաուչուկի համամիութենական ինստիտուտի Երևանի ֆիլիալի դիրեկտոր Ն. Կարապետյանը, Հիդրոմելիորացիայի ինստիտուտի դիրեկտոր Գ. Ազատանյանը, ԳԱ ակադեմիկոս Վ. Հ. Գուլբանյանը։

Ակադեմիայի 1962 թ. գործունեությունը լայնորեն քննարկվեց նաև ակադեմիայի բոլոր բաժանմունքների ժողովներում։ Բացի դրանից բաժանմունքներում լսվեցին 22 գիտական զեկուցումներ զանազան հիմնարկներում կատարված առավել կարևոր աշխատանքների մասին։ Ակադեմիայի ընդհանուր ժողովը լսեց ԳԱ թղթակից-անդամ Ա. Բ. Նալբանդյանի զեկուցումը «Նորմալցնիչի, խեժերի, պլաստմասսաների և պոլիֆորմալցնիչի սինթեզի համար կարևորագույն հումքի ստացման նոր արդյունաբերական եղանակի մասին»։

Ընդհանուր ժողովում ընտրվեցին նոր ակադեմիկոսներ և թղթակից-անդամներ։ Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ակադեմիկոսներ ընտրվեցին պատմական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Սուրեն Տիգրանի Երեմյանը, կոմպոզիտոր Արամ Եղիայի Խաչատրյանը, քիմիկոսներ Մանվել Գարեգինի Մանվելյանը և Արամ Բագրատի Նալբանդյանը։ Թղթակից-անդամներ ընտրվեցին ազգությունագիտության գծով՝ պատմական գիտությունների դոկտոր Լևոն Ստեփանի Խաչիկյանը, էլեկտրաէներգետիկայի գծով՝ տեխնիկական գիտությունների դոկտոր-պրոֆեսոր Հրանտ Տիգրանի Ագոնցը, տեսական ֆիզիկայի գծով՝ ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների դոկտորներ Գրիգոր Մարգարի Զաքիրյանը և Միքայել Լևոնի Տեր-Միքայելյանը, կենդանիների ֆիզիկայի գծով՝ դոկտոր-պրոֆեսոր Արտաշես Հովհաննեսի Քարամյանը, պատմության գծով՝ պատմական և բանասիրական գիտությունների թեկնածու Մարգար Ստեփանի Հասրաթյանը։ Այսպիսով, ակադեմիայի կազմում այժմ կան 39 ակադեմիկոս և 36 թղթակից-անդամ։

* * *

Հայկական ՍՍՌ գիտությունների ակադեմիայի ընդհանուր ժողովը ընտրեց նախագահության նոր կազմ։ Համաձայն ակադեմիայի կանոնադրության, ակադեմիայի պրեզիդենտի նոր ընտրություն կայանալու է մեկ տարի հետո։

Ակադեմիայի վիցե-պրեզիդենտ ընտրվեց Հրաչյա Խաչատուրի Բունիաթյանը, ակադեմիկոս-քարտուղար՝ Սերգեյ Սեդրակի Մկրտչյանը։

Գիտությունների բաժանմունքների գծով ակադեմիկոս-քարտուղարներ ընտրվեցին՝ հասարակական գիտությունների բաժանմունքում՝ Մկրտիչ Գեղամի Ներսիսյանը, ֆիզիկա-մաթեմատիկական գիտությունների բաժանմունքում՝ Սերգեյ Նիկիտայի Մերգելյանը, տեխնիկական գիտությունների բաժանմունքում՝ Մարտին Վահանի Կասյանը, կենսաբանական գիտությունների բաժանմունքում՝ Վարդան Հովհաննեսի Գույլբանդյանը։ Հանձնաբարվեց Բարդուղիմեոս Արաքելի Ջանաբջյանին մինչև նոր ընտրությունները շարունակել վարել բժշկական գիտությունների բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը։

Նախագահության ազատ անդամներ ընտրվեցին ԳԱ ակադեմիկոսներ Արտաշես Բալասի Կարինյանը, Դավիթ Ստեփանի Դավթյանը, Արմեն Գեորգի Նազարովը։

Հ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՀԻՆ ԱՐԵՎԵԼՔԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՄԻՈՒԹԵՆԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Վերջին տարիները նշանավորվեցին սովետական արևելագիտության նոր հաջողություններով արևելյան ժողովուրդների անցյալի ու ներկայի գիտական ուսումնասիրության ասպարեզում։ Սովետական արևելագիտության նվաճումները ակնառու կերպով դրսևորվեցին Մոսկվայում 1960 թ. կայացած արևելագետների միջազգային XXV կոնգրեսում, որտեղ մի շարք հանգուցային հարցեր իրենց լուսաբանումը գտան սովետական գիտնականների զեկուցումներում ու հրապարակումներում։

Պակաս կարևոր նշանակություն չունեցավ նաև 1958 թ. Լենինգրադում գումարված Հին Արևելքի ուսումնասիրության նվիրված սեսիան, որին մասնակցում էին Սովետական Միության բազմաթիվ մասնագետներ[1]։ Սեսիայի կարևոր արդյունքներից մեկն էր Հին Արևելքի պատմաբանների և բանասերների համամիութենական ընկերության ստեղծումը։ Այդ ընկե-

[1] Այդ մասին տե՛ս «Պատմա-բանասիրական հանդես», 1958, № 2, էջ 323—325։

-ության մեջ հին, ճանաչված կենտրոնների՝ Մոսկվայի և Լենինգրադի հետ միասին ներկայացված Լին Սովետական իշխանության տարիներին ստեղծված արևելագիտական նոր ուսումնական հանձինս Թբիլիսիի, Տաշքենդի Բաքվի, Երևանի գիտական հաստատությունների։ Ընկերության կազմի մեջ մտան մի շարք ակադեմիկոսներ, որոնք վերջին տարիներին հրատարակել են արժեքավոր աշխատություններ շումերագիտության բնագավառում ակադ. Վ. Վ. Սարուվեն և Ի. Մ. Դիակոնովը, ուրարտագիտության ասպարեզում՝ Բ. Բ. Պիոտրովսկին և Գ. Ա. Մելիքիշվիլին, սեմագիտության գծով՝ Ի. Ն. Վիننիկովը և այլն։ Ընկերության որոշմամբ 1962 թ. մայիսին Լենինգրադում տեղի ունեցավ Հին Արևելքին նվիրված Համամիութենական երկրորդ սեսիան, որը նշանավորվեց բնաբերվող հարցերի բազմազան թեմատիկայով և նոր, երիտասարդ կադրերի զգալի համալրումով։ Առաջավոր Ասիայի և Եգիպտոսի բաժինների հետ միասին սեսիայում հաջողությամբ գործում էին Իրանի և Հնդկաստանի, Չինաստանի և Հեռավոր Արևելքի նոր բաժիններ։ Կարդացվեց և քննարկվեց ընդամենը 67 զեկուցում։ Սեսիան տեղի ունեցավ իր աշխատանքները ՍՍՌՄ ԳԱ Ասիայի ժողովուրդների ինստիտուտի Լենինգրադի բաժանմունքի վարիչ՝ ԳԱ թղթակից-անդամ Ա. Ս. Կոնոնովի բացման խոսքով, որը շեշտեց Արևելքի ժողովուրդների հարուստ անցյալի ուսումնասիրության կարևոր նշանակությունը հատկապես ներկա էտապում։

Սեսիայի նախագահ ընտրվեց ակադեմիկոս Վ. Վ. Սարուվեն, որին, հիվանդության պատճառով, փոխարինեց ՍՍՌՄ ԳԱ թղթակից անդամ Ն. Վ. Պիգուլևսկայան։ Իր ներածական խոսքում նա հանգամանորեն կանգ առավ վերջին տարիներին սովետական արևելագիտության մեջ բերած հաջողությունների և հետագա խնդիրների վրա։

Պլենար նիստում առաջին ընթերցվեց Վ. Վ. Սարուվեի զեկուցումը «Տի» և «Ե» նախադանցները շումերական լեզվում» թեմայով։ Հաջորդ զեկուցումը կարդաց Գ. Ա. Մելիքիշվիլին (Թբիլիսի) «Ասորեստանը և «Նաիրիի երկրները» XII—XI դարերի շեմքին» թեմայով, որի մեջ, հաշվի առնելով ասորեստանյան, խեթական և ուրարտական արձանագրությունները, նոր մեկնաբանում էր տրվում Թիգլաթ-Պալասար II-ի տվյալներին՝ զեպի հյուսիս կատարված արշավանքների մասին։ Հատկապես հետաքրքիր էր Թիգլաթ-Պալասարի մոտ հիշատակված Թումմե երկրի համեմատումը խեթական աղբյուրներում նշվող Թումմաննայի հետ։

Ի. Մ. Դյակոնովի (Լենինգրադ) «Նոր տվյալներ Ուրարտուի սոցիալական կազմի մասին» զեկուցումը գրված էր Կարմիր-բլուրի ինչպես նաև Թոփրախ-բալեի ուրարտական տեքստերի հիման վրա, որոնք վերծանվել էին վերջերս հեղինակի կողմից։ Նոր տվյալները հնարավորություն են տալիս բավական մանրամասնորեն որոշել ն. մ. թ. VII դարի Ռուսախինիլի կոչված ուրարտական թագավորական նստավայրի պալատական անձնակազմի սոցիալական շերտավորումը։ Այս կապակցությամբ զեկուցողը մասնանշեց Ուրարտուում ազատ համայնականների առկայության փաստը, ինչպես նաև առաջարկեց Ռուսա I-ի Քեշիշ-գյոլի արձանագրության նոր թարգմանությունը։

Քննության առնված փաստաթղթերի վերլուծությունը զեկուցողին թույլ տվեց եզրակացնելու, որ ուրարտական գրության որոշակի ձևերը բխում են ոչ թե ասսուրականից, ինչպես ենթադրվում էր մինչև այժմ, այլ ն. մ. թ. II հազարամյակի վերջում տարածում գտած խուրրիական գրությունից։

Բ. Բ. Պիոտրովսկին (Լենինգրադ) մանրամասն պատմեց 1962 թ. Նուբիայում սովետական հնագիտական արշավախմբի աշխատանքների մասին։ Նեղոսի ափին գտնվել է վաղդինաստիական անառնապահական մեծ բնակավայր, որը թույլ է տալիս խոսելու այն նշանակալից գերի մասին, որ խաղացել է անասնապահությունը հին Եգիպտոսի հասարակության վաղ փուլերում։ Հայտնաբերվել են նաև մեծ դամբարանադաշտ, հավաքվել են բազմաթիվ արձանագրություններ։ Ս. Յա. Լուրիեի (Լվով) զեկուցումը նվիրված էր հունական կուլտուրայի վրա հին արևելյան ժողովուրդների կուլտուրայի ունեցած շոշափելի ազդեցության հարցին, որը երկար ժամանակ անտեսվում և նույնիսկ բացասվում էր մի շարք եվրոպական գիտնականների կողմից։ Մ. Է. Մատյեի (Լենինգրադ) և Ի. Ն. Վիننիկովի (Լենինգրադ) զեկուցումներով, առաջինը՝ եգիպտաբանական բնույթի, երկրորդը՝ սեմագիտական, ավարտվեցին պլենար նիստերը, որից հետո սեսիան շարունակեց իր աշխատանքները բուն բաժիններում։

Առաջավոր Ասիայի բաժնում լսվեցին Ի. Դ. Ամուսինի (Լենինգրադ), Ն. Ա. Մեշչերսկու (Պետրոզավոդսկ) և Լ. Է. Վիլսկերի (Լենինգրադ) հաղորդումները Ենիսեյ ծովի շրջակայքում հայտնաբերված ձեռագրերի ուսումնասիրման և գնահատման հարցերի մասին։ Ապա լսվեց Ա. Գ. Փերիխանյանի (Լենինգրադ) զեկուցումը «Գրաբարի արամեական լեքսիկայի երկու շերտի մասին» թեմայով։ Մինչև այժմ գրաբարի արամեական փոխառությունները դիտվում էին

որպես լոկ բրիստոնեական աստվածների ազդեցության արդյունք։ Այդ փոխառությունների մանրամասն վերլուծությունները, սակայն, հնդինակին բերել են այն համոզման, որ նրանց մի նշանակալից մասը կատարվել է հայոց լեզվի մեջ բավականին վաղ ժամանակներում տեղի ունեցած հնչյունական որոշակի փոփոխություններից առաջ, և որ փոխառությունների այդ վաղ խումբը, բացի իր հնչյունական կերպարի, արտահայտում է ոչ թե աստվածային լեզուն, այլ հյուսիս-արևելյան Միջագետքի (Հատրա-Ասսուր) արամեական բարբառը։ Աստվածներից կատարված փոխառությունները վերաբերում են բրիստոնեական և գրական բառապաշարին, իսկ արամեականիցը՝ առևտրականին և արհեստավորականին։ Հանդիպում են նաև ակկադական (հին ասորեստանյան) փոխառություններ, որոնց մի մասը անցել է հայերենին իրանական բարբառների և, հավանական է, ուրարտերենի միջնորդությամբ։ Այդ փաստերը վկայում են Հայաստանի և Միջագետքի միջև դեռևս արևմենյան ժամանակաշրջանում գոյություն ունեցող առևտրական կապերի, ինչպես նաև հելլենիստական ժամանակներում Հայաստանի քաղաքներում վերաբնակեցված և արամերեն խոսող առևտրա-արհեստավորական բնակչության ազդեցության մասին։ Մեծ հետաքրքրություն առաջացրեց Ա. Վայմանի (Լենինգրադ) հաղորդումը՝ «Շումերական պիկտոգրաֆիկ (պատկերագրային) տեքստերի հետազոտման մասին»։ Շումերական հնագույն տեքստերի վերծանման ուղիներն ու մեթոդները արդեն սպառել են իրենց և մարդկային հասարակության վաղագույն փուլերի սոցիալ-տնտեսական պատմության համար առաջնակարգ նշանակություն ունեցող հուշարձանները մնում էին անընթեռնելի։ Մեկնելով թվաբանական, մետրական և հաշվային սիստեմներից, հնդինակին հաջողվել է տալ մի քանի տեքստերի թարգմանության համոզիչ նմուշներ, մեթոդապես հիմնավորելով ամբողջ նյութը հաղթահարելու ուղիները։ Շումերական պատկերագրական (ջեմդեդնասերի տիպի) տեքստերի ընթերցումը զգալի չափով կընդլայնի մեր պատկերացումները Հին Արևելքի պատմության սկզբնական ժամանակաշրջանի մասին։ Շումերների պատմության և գրականության հարցեր էին արծարծվում նաև Ի. Տ. Կանևայի (Լենինգրադ) և Վ. Կ. Աֆանասևայի (Լենինգրադ) հաղորդումներում։ Ասսուրագիտությունը ներկայացված էր երկու զեկուցումներով՝ Ղ. Ի. Կիկնաձեի (Թբիլիսի) «Առասպելը և երգը ակկադական էպոսում» և Վ. Ա. Գևախարիայի (Թբիլիսի) «Մարդու ծագման մասին հիմնը և շումերա-ակկադական նոտագրության հարցերը»։

Մի շարք զեկուցումներում քննության էին առնված Փոքր Ասիայի հին պատմության ու լեզուների, հատկապես խեթագիտության, հարցեր։ Այդ շարքից ընթերցվեց Ն. Վ. Խազարաձեի (Թբիլիսի) զեկուցումը՝ «Փռյուգիայի (Մուշկու թագավորության) կուլտուր-տնտեսական հարաբերությունները Առաջավոր Ասիայի երկրների հետ», Է. Ա. Մենարդեն (Թբիլիսի) խոսեց «Քրեական պատասխանատվության մասին խեթական իրավունքի մեջ», Գ. Գ. Գեորգաձեի (Թբիլիսի) «Ն. մ. թ. II հազարամյակի կենտրոնական Փոքր Ասիայի և հարևան երկրների առևտրական և կուլտուրական փոխհարաբերությունների պատմությունից» վերնագրված զեկուցման մեջ քննության էին առնված Կապադովկիա ներթափանցած գրության մի քանի սիստեմները։ Ի. Մ. Դյակոնովայան (Լենինգրադ) և Վ. Վ. Իվանովը (Մոսկվա) խոսեցին լեզվագիտական հարցերի մասին։ Երկրորդը կանգ առավ խեթերենի, լիդիերենի, պալայերենի, լիկիերենի, լուվիերենի և Փոքր Ասիայի հնագույն այլ լեզուների պատմության հետ կապված հարցերի վրա։

Հանդես եկող զեկուցողներից մի քանիսը իրենց ուսումնասիրությունների բնագավառ էին դարձրել հին Էլամը, Բաբելոնը, Ուրարտուն, Հայաստանը և Անդրկովկասը։ Նու. Ռ. Յուսուֆովը (Բաքու) կարդաց «Տաճարային տնտեսության մասին Էլամում», Մ. Ա. Դամդամաևը (Լենինգրադ) հետաքրքրական տեղեկություններ բերեց անասունների վարձակալման հարցերի մասին, կապված Բաբելոնի սոցիալ-տնտեսական պատմության հետ, Դ. Դ. Ռեգերը (Մոսկվա) կանգ առավ ձիաբուծության հարցերի վրա Ուրարտուում։ «Հայաստանի և Անդրկովկասի նյութական կուլտուրայի մի քանի գծերի մասին արևմենյան ժամանակաշրջանում» թեմայով զեկուցման մեջ Գ. Ա. Տիրացյանը (Երևան) վերլուծման էր ենթարկել նշված ժամանակաշրջանի կուլտուրան բնութագրող չորս հուշարձանի՝ Ջրառատ (Հայաստան), Ախալգորի (Վրաստան), Մարբ-թեփե (Ադրբեջան) և Արին-բերդ (Հայաստան), նյութերը։

Իրանի և Հնդկաստանի բաժնում կարդացված զեկուցումներից շատերը աչքի ընկան իրենց գիտական բարձր մակարդակով։ Վ. Ի. Աբաևը (Մոսկվա) կանգ առավ ռեհիսթունյան արձանագրության հինգերորդ սյունակի Քսերքսեսի հակադեյան կոչված արձանագրության վերծանման վրա։ Զեկուցողի կարծիքով Քսերքսեսի իշխանությունը բնորոշող կրոնական ան-

Հանդուրժողականության բազմազանության սկզբունքները գալիս են իր նախորդից՝ Դարեհ I-ից։ Ըստ զեկուցողի, այդ մասին է վկայում բնության առնված արձանագրության հինգերորդ սյունակը, որի մեջ արևմենյան տերության ժողովուրդներին պարտադրվում է զրադաշտություն։ Ա. Ա. Գրանտովսկին (Մոսկվա) կարդաց «Այսպես կոչված մարական փոխառություններ հին պարսկերենում և պարսիկների հնագույն պատմություն» զեկուցումը և փորձեց ժխտել մարական լեզվական ձևերի առկայությունը հին պարսկերենում, որը կազմավորվել էր շատ վաղ ժամանակներում մինչև պարսկական ցեղերի երևան գալը հարավ-ռուսական տափաստաններից։ Վ. Ա. Լիպշիցը (Լենինգրադ) զեկուցում կարդաց «Սարուկների մասին տերմիններ հին իրանական լեզուներում» թեմայով, որը բաղկացած էր երկու մասից։ Եզրափակիչ պլենար նիստում, նախագահող Ն. Վ. Պիգուլևսկայան ամփոփեց արդյունքները։ Ապա միաձայն ընդունվեց ծավալուն բանաձև, որի մեջ արտահայտություն գտան սովետական արևելագիտության հրատապ խնդիրները։ Որոշվեց հաջորդ սեսիան անցկացնել 1965 թ. Լենինգրադում։

Պլենար և բաժինների նիստերից բացի, սեսիայում տեղի ունեցավ ընդհանուր դիսկուսիա նվիրված Հին Արևելքի տոհմային և գյուղական համայնքի պրոբլեմներին, որն ընթացավ մտքերի աշխույժ փոխանակության պայմաններում։ Դիսկուսիայում հիմնական զեկուցող Ի. Մ. Դյակոնովի, ինչպես նաև դիսկուսիայի մասնակիցների սղագրված ելույթները լույս կտեսնեն մասնագիտական կենտրոնական հանդեսներում։

Գ. ՏԻՐԱՏՅԱՆ